

Վարժարանի աշակերտութեան հայերէն, ֆրանսերէն եւ իտալերէն լեզուներով արտասանութիւնները ընդմիջութեամբ Մխիթարեան Նուագախումբի մանսալիկին վրայ զարկած կտորներով եւ երգերով: Նախկին սաներէն Տիար Թովմաս Գոչիկեան կարգադարձ ամփոփ ուղերձ մը առ Մխիթար. իսկ հանդէսը փակուեցաւ Մխիթար Արքայի «Զարթիւր աշխարհ» քայլերգով եւ Վարժարանին ուսուցիչ Տիար Մատթէոս Փափազեանի պերճախօս եւ ոգեւորիչ ճառով՝ զոր կ'ամփոփենք հոս. «1749 տարւոյն ապրիլ 27ին, Աստուած բարեհաճեցաւ յաւիտենական փառքի եւ հանդստեան հրաւիրել իր հաւատարմ ծառան Մեծն Մխիթարը, հիմնադիր-Արքայազար Մխիթարեանց ի Վենետիկ Ս. Ղազար: Երանաշնորհ մեծն Մխիթարի յաւերժ խնկելի եւ անմահ յիշատակը փառաւորելու սահմանուած այս հանդիսաւոր պահուն, մեծ յարգանքով եւ հոգեկան անասման հրճուանքով ու զմայլումով պատմական ակնարկ մը կը նետենք իր սուրբ ու ազնիւ կեանքին եւ կատարած հոյակապ գործին վրայ, փառաւոր գործ մը որ իր համազգային արժէքով ու տարողութեամբ մեծապէս յեղաշրջեց ու բարելաւեց Հայոց ազգային կրօնամշակութային կեանքը: Երբ 18րդ դարուն սկիզբը Հայաստանի ժողովուրդը ազիտութեան թանձր խաւարին մէջ ուղեկորոյց դատապարտուած էր կորսնցնելու իր ազգային ինքնուրոյնութիւնը եւ ցեղային պատմական դիմագծութիւնը, աստուածային բարձր նախախնամութիւնը Հայոց աշխարհի մօտայն հորիզոնին վերեւ բոցավառ ջահի մը նման ճառագայթեց լուսապայծառ դէմքը անմահն Մխիթարի որ իր դիւցազնական ազգասիրութեամբ, հեղական գիտութեամբ եւ կրօնական հաւատքի քննադատութեամբը Հայոց ազգային վերածնունդի լուսաշող ճանապարհը բացաւ, հիմնելով Մխիթարեան Միաբնակութիւնը, իր շուրջը համախմբած անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի վեհագի ու ազնուասիրտ ազգասէր Հայրերու շքեղ փաղանգը: Ամենասրբունի Տիրամօր Եղիշին տեսիլով յայտնուած մեծ ոյժ պարզեւած էր Մեծն Մխիթարի ընդդէմ բազմապիսի հայաժառնաց: Մխիթարի ազնիւ հոգին ուրախութեամբ կը յորդէր ի տես իր մեծ երազին իրականացման, երբ Վենետիկ հասարակապետութեան բարձրագոյն խորհուրդի բարեհաճ արտօնութեամբը Վենետիկ խաղաղ ծովալճին մէջ Ս. Ղազար կղզւոյն վրայ կը բարձրանար Հայ ցեղին հոգեւոր ու մտաւոր վերածնունդին փառաւոր տաճարը, յանձին Մխիթարեան Հայրց մենաստանին՝ ուր ազգային լուսաւորութեան եւ մշակութային յառաջդիմութեան բոցավառ ջահին սրբազան լոյսը միշտ պայծառ մնաց: Արդարեւ, Մխիթարեան Միաբնակութիւնը իր ազգային առաջադրութիւններով մեծն Մխիթարի գեղահանճար մտքին ու առաքինափայլ հոգւոյն վսեմագոյն ստեղծագործութիւնն է: Հայ ցեղին գոյութեան տեսականացման եւ ազգային մշակոյթի նուիրական ժողովուրդեան անեղծ պահանջման ազնիւ դադափարականով խանդավառ Մխիթարեան Ուխտին սրբազան հիմնադիրը եւ իր արժանւորները, յաջորդները, սիրայօժար ենթակուցեան ծանր զրկանքներու, տառապանքներու եւ վայրագ ու բիրտ հայաժառնքներու: Այո՛, ազգէն հալածեալ բայց ազգին հոգեւին նուիրեալ այս հայրենասէր առաքեալներ ազգին զերազոյն բարոյն եւ օգտին ծառայելու իրենց վսեմ նուիրումին մէջ մնացին անդրդուելի, եւ Մխիթարեան Հայրերու այս դիւցազնական հաստատամտութեան առաջ խորտակուեցան անհանդուրժողութեան եւ ազիտութեան կառուցած բոլոր արգելիչ պատուարները. քանզի Հայ ժողովուրդին հոգեւոր վերելքին եւ մտաւոր

լուսաւորութեան նուիրական դադափարը անդիմադրելի հզօրութեամբը դինած էր Ուխտին հաւատաւոր առաքեալները որոնք գերմարդկային անձնանուիրութեամբ, քրիստոնէական հաւատքին անսպաս կորովով զօրացած, հերոսական խոյանքով ամսաբեկ իջան եւ կրթական փրկարար ցանցով մը պատեցին Հայոց աշխարհը մեր լուսապայծառ Հայրապետաց կենդանարար հաւատքով ու մեսաւրական հայկազանց պերճ բարբառով լուսաւորելու եւ կրթելու հայ սերունդը: Ս. Ղազարու Մենաստանին մէջ ամփոփուած եւ միայն Աստուծոյ եւ Ազգին ծառայելու իրենց սրբազան Ուխտին հաւատարմութեամբը լծուեցան շինարար աշխատանքի, իրենց սրտին ու միտքին ազնուազոյն ստեղծագործութիւններով վերակենդանացուցին ու գեղակերտեցին Հայոց պերճ բարբառը, եւ պատմական ներհուն ուսումնասիրութիւններով վերակերտեցին ազգային պատմութեան վեհապանծ շքեղութիւնը: Մխիթարեան Հայրերու գիտական բարձր հմտութեան լուսարձակը դարերու թանձր խաւարէն ի լոյս աշխարհ ընծայեցին Հայաստանեայց աշխարհի պատմական անցեալի փառքը, հնախօսութիւնը, աշխարհագրութիւնը, տեղագրական դիմադրութիւնը, հանքային, բուսական եւ վեղդանական հարստութեանց մանրամասն ծանօթութեամբ ճոխացած: Մխիթարեան Հայրերու պաշտելի հայրենասիրութեան կը պարտինք Հայոց ազգային մշակութային նուիրական ժողովուրդեան փառքն ու պարծանքն հանդիսացող Ոսկեղարու իմաստասիրական, գիտական, գրական ու հոգեւոր ստեղծագործութեանց թանկագին դանձերուն անկորուստ պահպանումը: Զմայլելի նուիրումով մը կերտեցին նոր Ոսկեղարը, արդի հայ գրականութիւնը ճոխացնելով ինքնատիպ, հարազատ ստեղծագործութիւններով, եւ հայ ազգին հոգեւոր ու մտաւոր զարգացման մեծապէս նպաստեցին հայերէնի վերածելով մարդկային միտքը լուսաւորող, զգացումները կրթող եւ հոգին ազնուացնող միջադրական դասական ու արդի գրականութեան գլուխ գործոց երկերը: Ազգակերտումի եւ համազգային վերածնունդին ստատորոգ Մխիթարեան Հայրերու շինարար գործունէութիւնը մեծ ոգեւորութեամբ եւ սրբազան նուիրումով կը շարունակուի երկու դարէ ի վեր, հաւատք, յոյս, լոյս, սէր եւ միութիւն տարածելով ցեղիս վայրափառին որդւոց ազնիւ սրտերուն մէջ, միշտ բարձր բունած հայ ցեղին յառաջդիմութեան սրբազան դրօշը:

Ս. Ղազարի Մխիթարեան Միաբնակութիւնը Հայ ազգին յաւերժական փառքին տաճարն է. այդ նուիրական մենաստանէն ճառագայթող ազգային սիրոյ, կրօնական բարձր հաւատքի եւ շինարար գիտութեան վսեմ լոյսովը լուսաւորենք մեր միտքն ու հոգին, եւ երանաշնորհ ազգակերտ անմահն Մխիթարի, ազգիս անդուգական բարերարին եւ վերահորդչին առաքինի կենցաղը, անսահման սէրն ու հաւատքը, եւ խանդավառ հայրենասիրութիւնը եւ իր պանծալի յիշատակը թող սրտապնդէ մեզ եւ առաջնորդէ մեր քայլերը ազգային շինարարութեան եւ Հայրենիքի ծառայութեան վսեմ շաւղիներուն մէջ:

Օրհնեալ լլլայ ազգակերտ անմահն Մխիթարի անթառամ յիշատակը, եւ Բարձրեալն Աստուծոյ հօր Աջը ու ամենասրբունի Տիրամօր խանդակաթ սէրը տարածուի Մխիթարեան Ուխտին վրայ ի փառս Հայաստանեայց աշխարհի:

Կեցցէ՛ Մխիթարեան Միաբնակութիւնը. Կեցցէ՛ Հայ Ազգը»:

ԱՂԵՔԱՍԴՐԱՅԻ

## Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ՆՇԱՆԵԱՆ

### ՊԱՏՐԻԱՐԺ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Անցեալ Ապրիլի 19-ին Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի Միաբնական ժողովը միաձայնութեամբ որդ. Թորգոմ Պատրիարքի յաջորդ կ'ընտրէր Տ. Մեսրոպ Արքեպս. Նշանեանը, ի մեծ գոհունակութիւն թէ Միաբնակութեան եւ թէ ընդհանուր Հայութեան՝ որուն հաղորդուեցաւ ընտրութեան աւետիսը նոյն օրը, ժամը 9,15-ին՝ Երուսաղէմի ձայնասփիւռէն:

Կատարուած ընտրութիւնը անշուշտ արդիւնք է այն խոր համակրանքին եւ յարգանքին գոր Նորընտիր Ամեն. Սրբազանը կը վայելէ իր միաբնակիցներէն իր անբասիր եւ անձնանուէր եկեղեցականի գործունէութեան շնորհիւ՝ թէ՛ Ս. Էջմիածնի եւ թէ Երուսաղէմի վանքին մէջ:

Արդարեւ Նորընտիր Ս. Պատրիարքը ծնած ի Կ. Պոլիս 1872-ին եւ յետ աւարտելու Երուսաղէմի ժառանգաւորացը եւ վարդապետ ձեռնադրուելու 1898-ին, 1909-1910 եղած է Բարսիլոպար եւ գաւազանակիր Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոս Իգմիլթեանի՝ Ս. Էջմիածնի մէջ: 1922-ին կը նշանակուի Լուսաբարապետ Երուսաղէմի, եւ 1924-ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսէն:

Նորընտիր Ս. Եկեղեցականէն գատ գրական ալ ոչ նուազ արդիւնաւոր գործունէութիւն մը ունեցած է, տալով մեզի բանասիրական եւ յատկապէս կրօնական-եկեղեցական հնախօսական-աստուածաշնչական նիւթեր, ինչպէս նաեւ հետաքրքրական ուսումնասիրութիւններ Ս. Յակոբեանց վանքի դիւանէն՝ հրատարակուած «Սիւն»ի նոր շրջանի վերջին տասնեակ տարիներու պրակներուն մէջ:

Խմբագրութիւնս ձայնակից համօրէն ազգին անկեղծ եւ ջերմ զգացումներուն, ինչպէս երէկ խորին ցաւով մասնակից Ս. Յակոբեանց Միաբնակութեան եւ Ազգի մեծ սուգին՝ Տ. Թորգոմ Ս. Պատրիարքի մահուան առթիւ, այսօր եւ Ազգի մեծ սուգին՝ Տ. Թորգոմ Ս. Պատրիարքի մահուան առթիւ, այսօր ալ նոյնքան լիասիրտ կ'ուրախակցի եւ ջերմապէս կը մաղթէ որ նորընտիր Ս. Պատրիարքը ունենայ յաջող եւ արդիւնալից գործունէութիւն Երկնքի լիառատ օրհնութեամբ եւ օժանդակութեամբ, այն ուղղութեամբ եւ ծրագրով՝ գոր կ'ակնկալէ ամբողջ Հայ ազգը եւ Հայ Եկեղեցին իր վերանորոգման եւ իր պայծառութեան համար:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

